# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/58 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

18.08.2020թ.

ք. Երևան

07.08.2020-18.08.2020թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ տնտեսական ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/58 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Վ. Իսկանդարյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գործերի կառավարիչ,

Գ. Մխիթարյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի գլխավոր ինժեներ,

Ի. Հարությունյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ընդհանուր բաժնի պետ,

Ա. Ղուկասյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնիկական բաժնի պետ,

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Իսկանդարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Հանձնաժողովի անդամ Լ. Լևոնյանը («Գծի և թունելային կառույցների» մասնաճյուղի ինժեներ) բացակայում էր:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի օգոստոսի 7-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ժամը 09:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ապակեթել ժապավեն 30-35մմ | 120000 |
| 2 | Ապակեթել ժապավեն կպչուն | 25000 |
| 3 | Բամբակաթել ժապավեն /կիպերային/ 25/30մմ*100մ | 100000 |
| 4 | Խեժե ժապավեն 80մմ*100մ | 120000 |
| 5 | Հեղուկ օճառ 5լ | 37500 |
| 6 | Մաքրող հեղուկ 5լ | 54000 |
| 7 | Սեղանի շոր 300*300մմ | 15000 |
| 8 | Սպունգ 100*250*50մմ | 10000 |
| 9 | Օճառ տնտեսական 250գր. | 20800 |
| 10 | Օճառ ձեռքի 150գր. | 15000 |
| 11 | Ավել | 28000 |
| 12 | Սկոչ թափանցիկ 50մմ - 100մ | 30000 |
| 13 | Սկոչ թափանցիկ 20մմ - 100մ | 6000 |
| 14 | Կպչուն ժապավեն երկկողմանի 40մմ | 48000 |
| 15 | Փոշեկուլ արտադրական | 65000 |
| 16 | Լաթ | 60000 |
| 17 | Ձողակարգին 150մմ | 65000 |
| 18 | Սպրեյ կոռոզիա մաքրող | 10000 |
| 19 | Սպրեյ հակակոռոզիոն | 10000 |
| 20 | Հեղուկ էլ.մեկուսիչ | 12000 |
| 21 | Ջերմաչափ | 6000 |
| 22 | Մկրատ դերձակի | 6000 |
| 23 | Դանակ կոշկակարի | 12500 |
| 24 | Հարթաչափ 1մ | 18000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1 | «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00915091, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 53, Հեռ.՝ 094159994, էլ. հասցե՝ ncharekian@gmail.com |
| 2 | «Էկոմիքս» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01255701, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 60/2, Հեռ.՝ 098360326, էլ. հասցե՝ tenders@360shinbaza.am |
| 3 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 04234503, գործունեության հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ Գ. Շահումյան Ա. Մինասյան 28, Հեռ.՝ +(374)94242426, էլ. հասցե՝ global-shin@inbox.ru |
| 4 | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | ՀՎՀՀ՝ 00869016, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Խուդյակովի 177/1, Հեռ.՝ (010)624966, էլ. հասցե՝ daniniczech@yandex.ru |
| 5 | «ՍԱԴ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01256025, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շիրազի 18/10, Հեռ.՝ 094552522, էլ. հասցե՝ samvelsahakyan527@gmail.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակիցների.

- «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ.

  1. Ընկերության տնօրեն նշված է Նորայր Չարըգեանը, փաստաթղթերը ստորագրված են Պետրոսյան Մերիի կողմից, սակայն բացակայում է հայտում առկա փաստաթղթերը վերջինիս կողմից էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելու լիազորություն վերապահված լինելու մասին տեղեկատվությունը:

  2. Հավելված 1-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը թերի է ներկայացված, մասնավորապես՝ նշված չէ իրական շահառուի հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

  3. Հավելված 1-ով ներկայացված է, որ ընկերությունը հայտ է ներկայացնում Ընթացակարգի 2-րդ չափաբաժնին, մինչդեռ Հավելված 1.1-ով և Հավելված 2-ով ներկայացված տեղեկատվությունը Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով է:

4. Հավելված 2-ով ներկայացված տեղեկատվության մեջ նշված ծածկագիրը չի համապատասխանում Ընթացակարգի ծածկագրին, 6-րդ չափաբաժնով ներկայացված գնման առարկայի անվանումը նույնպես:

- «Էկոմիքս» ՍՊԸ - Հավելված 1.1-ով 15-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագրում հզորությունը սահմանված է 1600Վտ, մինչդեռ Հրավերով պահանջվել էր 1800Վտ:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ապակեթել ժապավեն 30-35մմ | - | 120,000.00 | - | - | - |
| 2 | Ապակեթել ժապավեն կպչուն | - | 25,000.00 | - | - | - |
| 3 | Բամբակաթել ժապավեն /կիպերային/ 25/30մմ*100մ | - | 100,000.00 | - | - | - |
| 4 | Խեժե ժապավեն 80մմ*100մ | - | 120,000.00 | - | - | - |
| 5 | Հեղուկ օճառ 5լ | «Էկոմիքս» ՍՊԸ | 37,500.00 | 25,875.00 | 5,175.00 | 31,050.00 |
| | | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 37,500.00 | 50,445.00 | - | 50,445.00 |
| | | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | 37,500.00 | 19,875.00 | 3,975.00 | 23,850.00 |
| | | «ՍԱԴ» ՍՊԸ | 37,500.00 | 12,000.00 | 2,400.00 | 14,400.00 |
| 6 | Մաքրող հեղուկ 5լ | «Էկոմիքս» ՍՊԸ | 54,000.00 | 35,200.00 | 7,040.00 | 42,240.00 |
| | | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 54,000.00 | 77,880.00 | - | 77,880.00 |
| | | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | 54,000.00 | 31,000.00 | 6,200.00 | 37,200.00 |
| | | «ՍԱԴ» ՍՊԸ | 54,000.00 | 18,000.00 | 3,600.00 | 21,600.00 |
| 7 | Սեղանի շոր 300*300մմ | «ՍԱԴ» ՍՊԸ | 15,000.00 | 10,000.00 | 2,000.00 | 12,000.00 |
| 8 | Սպունգ 100*250*50մմ | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | 10,000.00 | 4,000.00 | 800.00 | 4,800.00 |
| 9 | Օճառ տնտեսական 250գր. | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 20,800.00 | 41,418.00 | - | 41,418.00 |
| | | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | 20,800.00 | 22,750.00 | 4,550.00 | 27,300.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 | Օճառ ձեռքի 150գր. | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 15,000.00 | 19,397.00 | - | 19,397.00 |
| | | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մ6 | 15,000.00 | 13,500.00 | 2,700.00 | 16,200.00 |
| 11 | Ավել | «Էկոմիքս» ՍՊԸ | 28,000.00 | 32,800.00 | 6,560.00 | 39,360.00 |
| | | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մ6 | 28,000.00 | 24,400.00 | 4,880.00 | 29,280.00 |
| 12 | Սկոչ թափանցիկ 50մմ - 100մ | «Էկոմիքս» ՍՊԸ | 30,000.00 | 25,700.00 | 5,140.00 | 30,840.00 |
| | | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 30,000.00 | 31,860.00 | - | 31,860.00 |
| | | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մ6 | 30,000.00 | 21,250.00 | 4,250.00 | 25,500.00 |
| 13 | Սկոչ թափանցիկ 20մմ - 100մ | «Էկոմիքս» ՍՊԸ | 6,000.00 | 14,200.00 | 2,840.00 | 17,040.00 |
| | | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մ6 | 6,000.00 | 5,250.00 | 1,050.00 | 6,300.00 |
| 14 | Կպչուն ժապավեն երկկողմանի 40մմ | «Էկոմիքս» ՍՊԸ | 48,000.00 | 32,800.00 | 6,560.00 | 39,360.00 |
| 15 | Փոշեկուլ արտադրական | «Էկոմիքս» ՍՊԸ | 65,000.00 | 57,120.00 | 11,424.00 | 68,544.00 |
| 16 | Լաթ | «ՍԱԴ» ՍՊԸ | 60,000.00 | 680,000.00 | 136,000.00 | 816,000.00 |
| 17 | Ձողակարգին 150մմ | - | 65,000.00 | - | - | - |
| 18 | Սպրեյ կոռոզիա մաքրող | «Էկոմիքս» ՍՊԸ | 10,000.00 | 6,413.33 | 1,282.67 | 7,696.00 |
| 19 | Սպրեյ հակակոռոզիոն | - | 10,000.00 | - | - | - |
| 20 | Հեղուկ էլ.մեկուսիչ | - | 12,000.00 | - | - | - |
| 21 | Ջերմաչափ | - | 6,000.00 | - | - | - |
| 22 | Մկրատ դերձակի | - | 6,000.00 | - | - | - |
| 23 | Դանակ կոշկակարի | - | 12,500.00 | - | - | - |
| 24 | Հարթաչափ 1մ | «Էկոմիքս» ՍՊԸ | 18,000.00 | 13,860.00 | 2,772.00 | 16,632.00 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,

2. 1-4, 17, 19-23 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

4. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «Էկոմիքս» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «Էկոմիքս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| - | «Հիգիեն անդ Պերսոնալ կեյր» ՍՊԸ | անբավարար |
| 5, 6, 11-15, 18, 24 | «Էկոմիքս» ՍՊԸ | բավարար |
| 5, 6, 9, 10, 12 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | բավարար |
| 5, 6, 8-13 | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | բավարար |
| 5, 6, 7, 16 | «ՍԱԴ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ 9-11, 13, 15, 16 չափաբաժինների մասով բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:
2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 17.08.2020թ. ժամը 10:00-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 13-րդ հարկում:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Կայացան գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները: Բանակցություններին մասնակիցներից ներկա էր «ՍԱԴ» ՍՊԸ-ի տնօրենը:

Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց մասնակցի համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ յուրաքանչյուր լոտի մասով առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակցի կողմից նոր գնային առաջարկ չներկայացվեց:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. 9-11, 13, 15, 16 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

2. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գին /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 5 | 3 | «Էկոմիքս» ՍՊԸ | | 25,875.00 |
| | 4 | «Գլոբալ Շին» ՍՊԸ | | 50,445.00 |
| | 2 | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | | 19,875.00 |
| | 1 | «ՍԱԴ» ՍՊԸ | X | 12,000.00 |
| 6 | 3 | «Էկոմիքս» ՍՊԸ | | 35,200.00 |
| | 4 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | | 77,880.00 |
| | 2 | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | | 31,000.00 |
| | 1 | «ՍԱԴ» ՍՊԸ | X | 18,000.00 |
| 7 | 1 | «ՍԱԴ» ՍՊԸ | X | 10,000.00 |
| 8 | 1 | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | X | 4,000.00 |
| 12 | 2 | «Էկոմիքս» ՍՊԸ | | 25,700.00 |
| | 3 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | | 31,860.00 |
| | 1 | «Դանինի ՍՊԸ»-ի Հայաստանյան մճ | X | 21,250.00 |
| 14 | 1 | «Էկոմիքս» ՍՊԸ | X | 32,800.00 |
| 18 | 1 | «Էկոմիքս» ՍՊԸ | X | 6,413.33 |
| 24 | 1 | «Էկոմիքս» ՍՊԸ | X | 13,860.00 |

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ 4, դեմ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկները և պայմանագրերի նախագծերը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջիններիս կողմից պայմանագրերը չստորագրելու և պայմանագրերի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Վ. Իսկանդարյան |
| **Անդամներ** | | Գ. Մխիթարյան |
| | | Ի. Հարությունյան |
| | | Ա. Ղուկասյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |